



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 148

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 172-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3²-ՐԴ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասի կապակցությամբ խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանում տրամադրելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի հիման վրա ներկայացված դիմումը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. ՀՀ դատարանների նախագահների խորհրդին հասցեագրված իր դիմումում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում ամրագրված մոտեցումները, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, իրավական և ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքները, մասնավորապես՝ տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը, ինչպես նաև մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ընդգծել է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի դրա երաշխավորման պահանջից ցանկացած կամայական նահանջ: Դիմումատուի կարծիքով՝ հնարավոր

սահմանափակումները կարող են իրավաչափ դիտարկվել և արդարացվել միայն սահմանադրական կարգի հիմունքների, հանրության առողջության և բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, հասարակական կարգի պահպանության անհրաժեշտության առկայության դեպքում: Այլ խոսքով՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման խնդիրը սերտորեն առնչվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման քրեական դատավարության հիմնաքարային խնդրին:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդին հասցեագրված իր դիմումում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը նշել է նաև, որ չնայած ՀՀ վճռաբեկ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանների կողմից ձևավորված նախադեպային իրավունքին՝ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն առգրավելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունները, և այդ միջնորդությունները բավարարելու մասին դատարանի որոշումները հաճախ բովանդակային առումով որևէ հիմնավորում չեն պարունակում, դրանցից չի երևում այդպիսի տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը, ինչպես նաև այդ տեղեկությունների կապը կատարված արարք(ներ)ի հետ: Ավելին, նախաքննության մարմնի համապատասխան միջնորդությունները բավարարելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս դատարանները հաճախ չեն հիմնվում ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0015/07/13 և 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԳ/0223/07/14 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա, մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի (...) դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնաման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Ուստի հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը ՀՀ դատարանների նախագահների խորհրդին հասցեագրված իր դիմումում նշել է, որ անհրաժեշտ է խորհրդատվական բնույթի պարզաբանում տալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալը թույլատրելու հարցի կապակցությամբ:

2. Բարձրացված հարցադրման կապակցությամբ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է.

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

(...):»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23[-րդ] (...) [հոդվածով] (...) ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3²-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝

սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: (...)»:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ: (...)»:

Մեջբերված դրույթները ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել թիվ ԱՎԳ/0015/07/13 և թիվ ԵԿԳ/0223/07/14 գործերով կայացված որոշումներում:

3. Թիվ ԱՎԳ/0015/07/13 գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) կոնկրետ քրեական գործի շրջանակներում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը դատարանի որոշման հիման վրա կարող է ստանալ բանկի այն հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Այլ խոսքով՝ քրեական գործի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները չեն կարող տրամադրվել հետաքննության կամ նախաքննության մարմիններին: Այս տրամաբանությամբ նշված մարմիններին չեն կարող տրամադրվել նաև անձանց անորոշ շրջանակի կողմից որոշակի ժամանակահատվածում կատարված գործարքների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները» (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0015/07/13 որոշման 19-րդ կետը):

Չարգացնելով թիվ ԱՎԳ/0015/07/13 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԳ/0223/07/14 որոշմամբ արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում ամրագրված դրույթի այն մեկնաբանությունը, որ դատարանի որոշման հիման վրա կարող են ստացվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալները, օրենսդրական այս դրույթի բովանդակության և կիրառման

շրջանակների անհարկի նեղացում է: Նման մեկնաբանությունը չի համապատասխանում քննարկվող դատավարական (քննչական) գործողությունների առջև դրված խնդիրներին, էականորեն սահմանափակում է դրանց՝ քրեական գործով վարույթի համար ունեցած դերն ու նշանակությունը: (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության վերլուծությունը վկայում է, որ խոսքը ոչ թե սոսկ կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ, այլև նրան մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մասին է, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից» (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0223/07/14 որոշման 26-րդ կետը):

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի պատճառաբանված որոշման մեջ պարունակվող միջնորդությունը՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար:

2. Որոշման պատճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել համապատասխան քննչական գործողություն, ինչպիսի տվյալներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված այդպիսի գործողությունների արդյունքում, (...) ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար: Եթե այդ նյութերը բավարար չեն, դատավորն իրավունք ունի պահանջել՝ լրացնել դրանք»:

Վերոգրյալ իրավական դրույթների համատեքստում Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0223/07/14 որոշմամբ արձանագրել է. «(...) վարույթն իրականացնող մարմինը պետք է քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով (փաստական տվյալներով) հիմնավորի, որ համապատասխան քննչական գործողության արդյունքում ձեռք են բերվելու կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող և այն իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է

կասկածյալի կամ մեղադրյալի կողմից: Նման մեկնաբանության համար հիմք է ծառայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի և 282-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությամբ պետք է ներկայացնի անհրաժեշտ և բավարար փաստեր, որոնք դատարանին հիմք կտան ողջամտորեն ենթադրել, որ տվյալները, որոնք ակնկալվում է ստանալ համապատասխան քննչական գործողության կատարման արդյունքում, անմիջականորեն առնչվում են կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին և վերաբերում են նրա կողմից ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող իրավաբանական անձին» (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԳ/0223/07/14 որոշման 28-րդ կետը):

Նույն որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև. «(...) բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց կարող են տրամադրվել միայն այն սահմաններում և միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նպատակների, այդ թվում՝ հանրային շահի ապահովման համար՝ պայմանով, որ նախատեսված են մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործուն երաշխիքներ» (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԳ/0223/07/14 որոշման 20-րդ կետը):

5. Սույն որոշման 2-4-րդ կետերի վերլուծության հիման վրա ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը քննելիս դատարանը պետք է անդրադառնա հետևյալ հանգամանքներին՝

ա) նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդությունից բխում է արդյոք, որ առկա է օբյեկտիվ կապ ապագայում ստացվելիք բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների և կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ի միջև,

բ) առկա է արդյոք իրավաբանական կամ փաստացի կապ կասկածյալի կամ մեղադրյալի և այն իրավաբանական անձի միջև, որի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պետք է գաղտնագերծվեն: Նման կապի առկայության դեպքում կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող արարքներն անմիջականորեն առնչվում են

արդյոք համապատասխան իրավաբանական անձի՝ բանկային գաղտնիք կազմող այն տեղեկությունների հետ, որոնք պետք է գաղտնագերծվեն,

գ) համապատասխան քննչական գործողության արդյունքում ստացված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններով կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ի առնչությամբ ինչպիսի փաստական հանգամանքներ պետք է հաստատվեն, հերքվեն կամ ճշտվեն,

դ) նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդության մեջ առկա են արդյոք (ա), (բ), (գ) կետերում շարադրված հանգամանքները հավաստող բավարար փաստական տվյալներ,

ե) համապատասխան քննչական գործողության արդյունքում բանկային գաղտնիք կազմող կոնկրետ որ տեղեկությունները կարող են ստացվել նախաքննության մարմնի կողմից:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է նաև, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը քննելիս դատարանը պետք է հստակեցնի նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում բանկի հետ անձի ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները (բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները) կարող են ստացվել նախաքննության մարմնի կողմից: Ժամանակահատվածի հստակեցման պահանջը էական նշանակություն ունի անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման և հնարավոր չարաշահումները կանխելու տեսանկյունից: Այս առումով անհրաժեշտ է ապահովել, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու թույլտվությունը տրամադրվի ոչ թե անորոշ, այլ հստակ ժամանակահատվածի համար: Մասնավորապես, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում բանկի հետ անձի ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները (բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները) անհրաժեշտ են ապացուցման առարկայի մեջ մտնող փաստական հանգամանքները հաստատելու, հերքելու կամ ճշտելու համար:

Վերոնշյալ հանգամանքները պարզելուց հետո միայն դատարանը պետք է պատճառաբանված որոշում կայացնի միջնորդության հիմնավորվածության կամ անհիմն լինելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը՝

Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է

Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության արդյունքում դատարանը պետք է պատճառաբանված որոշում կայացնի՝ քննության առարկա դարձնելով հետևյալ հանգամանքները՝

ա) ապագայում ստացվելիք բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների և կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ի միջև օբյեկտիվ կապը,

բ) կասկածյալի կամ մեղադրյալի և այն իրավաբանական անձի կապը, որի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պետք է գաղտնագերծվեն,

գ) կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող արարքների առնչությունը համապատասխան իրավաբանական անձի՝ բանկային գաղտնիք կազմող այն տեղեկությունների հետ, որոնք պետք է գաղտնագերծվեն,

դ) կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին առնչվող այն փաստական հանգամանքները, որոնք պետք է հաստատվեն, հերքվեն կամ ճշտվեն համապատասխան քննչական գործողության արդյունքում ստացված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններով,

ե) նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդության մեջ (ա), (բ), (գ), (դ) կետերում շարադրված հանգամանքները հավաստող բավարար փաստական տվյալների առկայությունը,

է) բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների կոնկրետ շրջանակը, որը կարող է ստացվել նախաքննության մարմնի կողմից,

ը) ժամանակահատվածը, որի ընթացքում բանկի հետ անձի ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները (բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները) կարող են ստացվել նախաքննության մարմնի կողմից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2015թ. հուլիսի 16
ք. Երևան